

ծառնութեանց մէջ՝ հելլէն ճարտարութեամբ և ձեռներէցութեամբ :

Այդ մեծ հայ վաճառատուններուն քով՝ քսանի չափ օսանիւներ (թոփով վաճառողներ) կաճէին կը զօրանային բոլորովին տեղական գործունէութիւններով՝ ներկայացունելով ի թուրքահայս գլխաւորապէս պասմայի ու ամէրիգանի հատորով վաճառումը :

Մեծ վաճառականներուն և այս օսանիւներուն կարևոր շահաստաններն էին՝ բաց ի վերոյիշեալ գլխաւոր քաղաքներէն՝ Ասիայի և մանաւանդ Ռումէլիյի գլխաւոր նաւահանգիստները գիւղաքաղաքներն ու տօնավաճառները՝ մարդախիտ և շահընծայ, կիսով չափ կանխավճարք և վստահելի յանձնակատարք՝ թուրք, Հայ, Յոյն, Հըրեայ, Պուլկար, Կուրճի, Չէրքէզ, Արնաուուտ : Կ. Պոլիսի մէջ՝ գլխաւոր օսանիւներ էին՝ Սենեքերիս Մանուկեան⁽¹⁾, Առաքել Քացախ, Գէորգ Մուրատեան, Յովասափ, Ալիքսան Մասեհեան, Սահակ Աղաճան և այլք, որոնց յառաջացեալները ամիսն 2500—3000 ոսկիի գործ կը դարձունէին : Ասոնցմէ էին նաև Լաթիֆեան Գասպար ու Աւետիս եղբարք՝ շառաւիղք հին տոնի մը, որ ամերիգանի շալի և նմանեաց վրայ լուին գործունէութեամբ կառուարէին :

Իսկ Անգղիայի մէջ՝ մանաւանդ ի Մանչէսթըր՝ նոյն թուականներուն հայ վաճառական գաղթականութիւնն հասած էր նշանակելի 30 անդամի թիւի մը, որ մեծ մասով ժիր ինքնաձեռնարկ Պոլսեցիներ և Զմիւռնացիներ էին ու Հայերուն մէջ առաջիկաներն անգղիերէն բանուկ լեզուն ուսումնասիրողներուն : Եւ ասոնց ալ անգ-

(1) Ետքը մեծ վաճառական եղաւ՝ տուն մը բանալով իր անունով Սէնգղիա. իր վրայ քիչ մը ընդարձակ պիտի գրենք աւելի ետքը :